ՆԱԽԱԳԻԾ 55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2012 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N1013-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ և 23-րդ հոդվածների 3-րդ մասերին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի N 48 որոշման 66-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետություն ներկրված արևածաղկի ձեթի իրացման մասին» N 1013-Ա որոշման որոշման 1-ին կետում «2011 թվականի դեկտեմբերի 1-ի» բառերը փոխարինել «2012 թվականի մայիսի 1-ի» բառերով:

2. «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման 5-րդ, 11-րդ և 12-րդ հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, և 3 հավելվածների:

3. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և անապահովության «0» միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով «Ապավեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով սույն որոշմամբ սահմանված 358017 շիշ ձեթի փոխադրման, բեռնման և բեռնաթափման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական

բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից առաջին կիսամյակում հատկացնել ..... հազար դրամ, ինն ամսում՝ ,,,,,,,,,, հազար դրամ և տարեկան՝ ,,,,,,,, հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով):

4. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ընթացիկ տարում արևաճաղկի ձեթի փոխադրման ծառայությունը ձեռք բերել բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Գրիգորյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N1013-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1786 որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքներին տրամադրվելու է բնաիրային օգնություն արևաածողկի ձեթի ձևով, յուրաքանչյուր ընտանիքին 3 շիշ հաշվարկով:

2011թ. դեկտեմբեր և 2012թ. հունվար ամիսներին արևաածաղկի ձեթի բաշխման աշխատանքներն իրականացվել և ավարտվել են:

Ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն, 2011 թվականի հուլիսի 14-ի N1013-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է նույն պայմաններով իրականացնել արևաածաղկի ձեթի բաշխում՝ ՀՀ սոցիալապես անապահով ընտանիքներին:

2012թ. մարտի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» անապահովության միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների թիվը կազմում է 119339: Այսպիսով, այդ ընտանիքներից յուրաքանչյուրին 3 շիշ արևաածաղկի ձեթ հատկացնելու համար անհրաժեշտ է 358017 շիշ արևաածաղկի ձեթ:

Հաշվի առնելով, որ 2011թ.ին իրականցված արևաածաղկի ձեթի բաշխման աշխատանքների արդյունքում հանրապետության ՍԾՏՄ-ներում առկա է արևաածաղկի ձեթի 5403 շիշ մնացորդ, նախատեսվում է ՀՀ ՍԾՏՄ-ներին տրամադրել 352614 շիշ արևաածաղկի ձեթ:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N1013-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն, 2011 թվականի հուլիսի 14-ի N1013-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ առաջարկվում է արևաածաղկի ձեթի՝ ՀՀ մարզեր (55 ՍԾՏՄ-ներ) տեղափոխման, ինչպես նաև բեռնման և բեռնաթափման ծախսերի փոխհատուցման նպատակով կատարել ՀՀ պետական 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում:

Հաշվի առնելով, որ արևաածաղկի ձեթը պահեստավորված է ք. Հրազդանում և Հրազդանի ՍԾՏՄ արևաածաղկի ձեթի փոխադրում չի իրականացվելու (2694 ընտանիքների համար 8082 շիշ արևաածաղկի ձեթ), կից ներկայացվող բացատրագրում հաշվարկները կատարվել են արևաածաղկի ձեթի (358017-5403-8082 =344532) 344532 շշի համար: